



Սուրբ Խաչ Հայաստանեայց Եկեղեցի Holy Cross Armenian Church

P.O. Box 2387 Station "C", Downsview, Ontario, Canada M3N 2V8

Reverend
Houssig Nishanian
Pastor
Telephone (416) 759-6958

Toronto. 10. Դեկտեմբեր 1981.

Գիրաշնորհ Տէր
Թորգոմ Ս. Արք. Մանուկեան
Առաջնորդ
Նեխազան Թեմական Խորհուրդի
Նիւ Ծօրք.

Սրբազան Հայր,

25 Նոյեմբեր 1981 Զորեգշաբթի օր, ծխական Խորհուրդի Ատենապետ
Պր. Արմէն Քիւրքճեան, Առաջնորդարանի Վարիչ-քարտուղար Պր. Գրանք
Աւագեանէ, 5 Դեկտեմբեր Եարաթ օր, ծխական Խորհուրդի երկու ուրիշ
Ներկայացուցիչներով միասին Առաջնորդարան ներկայանալու, հեռաձայ-
նային հրաւէր ստացած է:

Պր. Քիւրքճեան, այդ թուականին Միացեալ նահանգներ ուրիշ տեղ
մը հրաւիրուած ըլլալով, օրուայ անպատեհութիւնը Պր. Աւագեանի ման-
րամասնութեամբ բացատրած է:

Մի քանի ժամեր յետոյ, Պր. Աւագեան դարձեալ հեռաձայնելով,
ծխական Խորհուրդէն երեք լիազօր Ներկայացուցիչներ 18 Դեկտեմբերի
Թեմական Խորհուրդի նիստին ներկայանալու հրաւիրած եւ օղանաւային
երթուղարձի տեղերուն ապահովուած ըլլալը տեղեկացուցած է:


Ծխական Խորհուրդը, 8 Դեկտեմբեր նիստին, Թեմական հշխանութեան
հրաւէրը սիրով ընդունած է: Ուրախ է թէ՝ Թեմական Խորհուրդի հետ
հանդիպում մը ունենալու առիթը իրեն կընծայուի, սակայն ի յայտ
եկած է թէ՝ անդամներէն երեք քմիշկներ, կանխաւ կարգադրուած հի-
ւանդանցի ժամադրութիւններուն եւ մնացեալներն ալ քրիսթմսի նախ-
օրհակին, անձնական աշխատութիւններուն պատճառաւ, իրենց գործերէն
շեն կրնար հեռանալ: Պարագան, ծխական Խորհուրդի Ատենապետին մի-

ջոցաւ, 9Դեկտեմբեր Չորեգշաբթի օր, Պր. Աւագեանին հեռածայնով
տեղեկացուցուած է եւ խնդրուած, որ տեսութիւնը կատարուի Թեմա-
կան Խորհուրդի ուրիշ մէկ նիստին: Ցարդ, պատասխան չէ ստացուած:
Ծխական Խորհուրդը ստացած է նաեւ 2Երդ Սրբազնութեան 24 նոյ-
եմբեր 1981 թուակիր եւ 27539 թիւ նամակը, ուր Վերոյիշեալ հրա-
ւերը կը կրկնուի:

8 Դեկտեմբերէն ի վեր, ծխական Խորհուրդի անդամներուն կարենալ
ծամբորդելու կացութեան մէջ որեւէ փոփոխութիւն չէ եղած:

Ծխական Խորհուրդը, իր այս նամակով, անգամ մը եւս կը խնդրէ,
ոյն այդ տեսութիւնը տեղի ունենայ Թեմական Խորհուրդի ուրիշ մէկ
նիստին ընթացքին:

Մատչիմք և Համբոյր
2Երդ Սրբազնութեան Աջին
և Դիմաց
Ծխական Խորհուրդի

 
Ղեւոնդ Շահմելիքեան Արմէն Քիւրքճեան
Ատենապիր Ատենապետ